

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ — ՏԵՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Ապրիլ 15

Թիւ 91 — ԺԸ

هزارايداق غزه تهسى

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Դր.
Գաւառաց համար	60 ,
Արսասահման	15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիշեր մը Ս. Յարութեան սանարին մէջ (Տպաւորութիւններ) Բ. Պ.
«Ակնոց» (Դարավերջիկ բարբեր) Թէոֆիլ
Տես եւ գործ. Մանկավարժութիւն Մ.
Լօրան Թալլաս Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ
Իմաստասիրութիւն ԹԱՓԱՌԻԿ
Երկրագործութիւն Բ. Պ.
Հիւանդ Փսիկս (Բերթուած) Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ
Յրահար Մարօն (Կեանքի պատահարներ) Մ. ԹՈՒՐԵԱՆ
Քիչ մը ծիծաղ Ս.

40 փարա 40

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ կը ծախուի. 1. Դասըզիւղ, Արմեն ԷՖ. Չպուգնեանի Դեղարանը. — 2. Սամաքիա, Կայարանին մօտ, ծխավանառ Յարութիւն Աղա Էժէքհանեանի խանութը. — 3. Կամուրջի գլուխը, ջրավանառ Նեան աղա Օզունեանի փոլ (նախկին ջրավանառ Պօղոս աղայի խանութը). — 4. Զրավանառ Սեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալենց, Ասենեան եւ Զարդարեան գրատուններ. — 6. Բոլոր լրագրավանառներուն փոլ:

Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱՊԵՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ ուղղակի Տեօրեանս դիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԷՐԵԱՆ

Էսկի Զապթիե հասցեայի Թիւ 61

1900



Է Բ Ի Թ Ա Պ Լ

(ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀԶՕՐ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԱՇԽԱՌՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 451 ՄԻԼԻՈՆ ՖՐԱՆԿ

1898ին՝ ԷԲԻԹԱՊԼ իր ապաՀովագրեալներուն բաժնած է աւելի քան 15⁵/₄ ՄԻԼԻՈՆ Ֆրանք շահաբաժին

[Այսինքն նոյն տարւոյ մէջ Ֆրանսական ՄԻԱՅԵԱԼ 17 ընկերութեանց բաժնած շահերու համագումարին գրեթէ կրկինը]:

Ախարհիս մէջ գտնուող ոչ մէկ ընկերութիւն

ԷԲԻԹԱՊԼԻ չափ գործառնութիւն ունի

ԷԲԻԹԱՊԼԻ չափ պահեստի գրամ ունի

ԷԲԻԹԱՊԼԻ չափ շահաբաժին կը վճարէ

Հետեւաբար ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱՅԱՆ ԵՒ աւելի ՇԱՀԱԻՏ ԸՆԹՈՅԵԼ ԿԵԱՆՔԻ ապահովագրութիւնը՝ որքան ԷԲԻԹԱՊԼ:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԱՌՐԻ

Լոնտոն

Անգղիոյ պանքա

Բարիզ ԵՒ Կ. Պոլիս, Գրեթի Լիոնէ

ՆԵՐԿԱՅԱՑՈՑԻՑԻՉ ԹՈՒՐԻՒՆՑ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Կ. Պոլիս, Պաճէ Գարու, Անտիաթի Խան

Պատկերագարդ Աշխարհագրութիւն

ՊՕԶԱԺԵԱՆ

Գին 4 դրու

Լոյս տեսաւ Ն. Պերպերեան մատուր տպագրութեամբ, քաղ. վերջին փոփոխութեանց Եւ Կրթական ծրագրին համաձայն: Մայրաքաղաքիս Է՛ն կարեւոր դպրոցներն անմիջապէս ընդունեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փետրեմբեր 1900ի տպագրութեամբ, որ 208 էջերէ կը բաղկանայ, Եւ իր պարունակած պատմական, գիտական, առեւտրական Եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ Եւ արժանի է ամէն ուսուցչի ուսուցչութեան:

Հանրագիտական Տնօրէնութիւնը կը հայրայթէ մեծաւանակ 30 առ 100 գեղջով:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

Կրէկուառ ՂազարօՅ Եւ Ընկ.

Պատիւ ունինք ծանուցանել թէ վաճառատունս փոխադրուած է Սասնգի Խան քիւ 1 Եւ 2: Ներդաշնակ բոլոր կեդրոններուն հետ իր ունեցած յարաբերութեանց շնորհիւ, բարձր դերու անհուն պէտքերով Եւ միշտ պատրաստ ունի մեծաւանակ, ինչպէս նաեւ տեղեկութեան համար վայելող ներդաշնակ բժիշկներու մասնագիտական պատրաստ դերերը ու ամէն տեսակ հանգային շուրերը: Գաւառներէ եղած յանձնարարութիւնք հեղիւ ու փութով կը կատարուին, անմիջեղի կերպիւ ածան գնելով:

Դիմեցե՛ք Եւ պիտի համոզուիք:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ — ՏՆՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Ապրիլ 15

Թիւ 91 — ԺԸ

ԳԻՇԵՐ ՄԸ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

[ՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ]

Հաւատքի թելադրութիւնը մեր աչքի առջեւ մուծին... Խաղաղութեան օխանդակաթ մօր մը աղապատանքը որ թեւան ըլլալու սահմանուած այդ հոյողորեց զիս գիշեր մ'անցընել Աստուծոյ ճաճարին խոնաւ կամարներուն տակ: Կեանքի պայքարին մէջ երկիցս դիտապատ ինկած, գրեթէ մահացած, կ'անիծէի դժխեմ ճակատագիրս, կը հեկեկայի տխուր, երբ այն պաշտելի ձայնը զոր կեանքի սեմին վրայ առաջին անգամ լսած ու ճանչցած էի, նորէն կեանք տուաւ ինձ... առանց սակայն կարենալու վերարժարծել երբեմնի հաւատքս որ տակաւ կը մահանար: Ուրեմն անկեղծօրէն պէտք է խոստովանիմ թէ իբրեւ ճշմարիտ հաւատացեալ մը չսպրդեցայ այդ լաբիրինդոս-տաճարին կիսափակ դռներէն երբ արդէն խաւարը կը պատէր համապարփակ: Եթէ սիրակաթ մօրկանս հաւատքի լոյսը չառաջնորդէր ինձ, թեւեւ վայրկեան մ'իսկ չուզէի մնալ հոն,

... Խաղաղութեան օխանդակաթ մօր մը աղապատանքը որ թեւան ըլլալու սահմանուած այդ հոյողորեց զիս գիշեր մ'անցընել Աստուծոյ ճաճարին խոնաւ կամարներուն տակ: Կեանքի պայքարին մէջ երկիցս դիտապատ ինկած, գրեթէ մահացած, կ'անիծէի դժխեմ ճակատագիրս, կը հեկեկայի տխուր, երբ այն պաշտելի ձայնը զոր կեանքի սեմին վրայ առաջին անգամ լսած ու ճանչցած էի, նորէն կեանք տուաւ ինձ... առանց սակայն կարենալու վերարժարծել երբեմնի հաւատքս որ տակաւ կը մահանար: Ուրեմն անկեղծօրէն պէտք է խոստովանիմ թէ իբրեւ ճշմարիտ հաւատացեալ մը չսպրդեցայ այդ լաբիրինդոս-տաճարին կիսափակ դռներէն երբ արդէն խաւարը կը պատէր համապարփակ: Եթէ սիրակաթ մօրկանս հաւատքի լոյսը չառաջնորդէր ինձ, թեւեւ վայրկեան մ'իսկ չուզէի մնալ հոն,

Բայց վերջապէս հաւատքէ վեր հզօր ազդեցութիւն մը ականայ տարած էր զիս Ս. Յարութեան ճաճարը, որոյ մուծ կամարներուն տակ պիտի գիշերէի... Նոր Դողդոթայի վրայ: Ուխտատեղիներու տրուած հեքոտ աչքէ մը վերջ, կ'ընկողմանիմ մյափելու համար: Կէս

գիշեր է. լուերու ահաւոր փոհմակի մը անխնայ յարձակումէն ընդոստ կ'արթննամ, առկայծ կանթեղին քով կը վազեմ. ձեռքերս ծաղկահար վերնամորթով մը պատած կը տեսնեմ. դէմքս չէի կրնար տեսնել... սիրելի մօրս քով կը դառնամ, որ մուշ մուշ կը քնանար իր լոյսահաւատքի վերմակին տակ թաղուած. լու մ'անգամ չեմ տեսներ անոր վրայ. ո՛հ, ինչո՞ւ համար ամենքն ալ իմ վրաս յարձակած էին... ինչո՞ւ համար կը հարցնէի ես ինձ, երբ անոյշ մեղեդիներու հեռաւոր մրմունջ մը ականջներս կը գգուէ: Կը շականջեմ ու կը ճանչնամ կանացի քաղցրալուր ձայնը որ կը թրթռար մութին մէջ. Կը փորձուիմ հոն վազել, հոն ուր հաւատքը գիշեր չունէր... Արագ արագ վար կ'իջնեմ նոր Գողգոթայի սանդուղներէն... Հիմակ ստորոտն եմ. գետինը հսկաներ պառկած են... անոնց հասակը վիթխարի համեմատութիւններով կը մեծնայ ու կը պզտիկնայ... սարսուռ կ'զգամ, ծունկերս կը կթոտին, կը փորձեմ նորէն վեր ելնել, բայց չեմ կրնար... Դիշերային երգեցողութեան ձայնը միշտ կը ձգէ՛ր, կը տանէր զիս... քանի մը քայլ կը յառաջանամ դէպի Ս. Գերեզմանը... քալե՛, կ'ըսէ ներսէս ձայն մը, ու կը քալեմ...

Յունաց աշխարհամատարան տաճարին ու Յիսուսի գերեզմանին մէջտեղէն կ'անցնեմ. հսկաները կը պզտիկնան հիմա. կը շօշափեմ զանոնք... ռուս ուխտաւորներ են որք մարմարին վրայ տառածուած, կը ննջեն յիմար իմաստուններու պէս: Երգեցողութեան ձայնը յանկարծ կը լռէ, եւ ես զիս կը գտնեմ ահաւոր մութին ու լռութեան մէջ: Սակայն ներքին հղօր ձայն մը կը մղէ զիս յառաջ... կը խտրեմ փեմ... Լատինաց եկեղեցին հասած եմ. ոչ ոք կայ հոն, մոմէ ու քարէ անկենդան արձաններ մի-

այն կը հսկեն հոն աղօտ կանթեղի մը պլպլուն լոյսով: Դուրս կը նետուիմ ու կը սկսիմ դառնալ... մի առ մի այցելել բոլոր ուխտատեղիները... բոլոր մատուռները...: Երեք երեք կ'իջնեմ Ս. Լուսաւորչի անուան նուիրուած խորափոս եկեղեցւոյն սանդուղներէն... հոն ալ ամայութիւն կը տիրէ... առկայծ կանթեղ մը միայն կը լուսաւորէ քայլերս... Փոսին մէջ եմ ուր լիահաւատ կնոջ մը ձեռամբ գտնուած էր քառաթեւը՝ աղբիւսին մէջ թաղուած: Այս պահուս երականերուս մէջ սարսուռ մը կ'ընթանայ... վեր կը վազեմ ոգեսպառ... այլեւս չեմ քալեր, այլ կը վազեմ... հեւ ի հեւ կը հասնեմ Գողգոթային առջեւ: Խոր լռութիւն կը տիրէ հոն, չեմ փորձուի վեր ելնել. տապանատեղիին քովէն կը սպրդեմ շուքի մը պէս, ուր եօթն մշտավառ կանթեղներու աղօտ լոյսը կը լուսաւորէ քայլերս մութին մէջ: Դրան մօտ կը տեսնեմ մարդկային սեւ գէմքեր, որք մերթ ընդ մերթ կը լուսաւորուին ծխափողին առկայծ լոյսով: Դռնապաններն են որ կը հսկեն արթուն: Յոգնած, պարտասած, կը հասնեմ անկողնոյս մօտ եւ կը փորձեմ քնանալ, բայց ի զո՛ւր...:


Հագիւ աչքերս կը փակեմ, ահա օրհներգութեանց հոգեյոյզ մրմունջը. որ գիշերային ակամայ ուխտագնացութիւն մը կատարել տուած էր ինձ, նորէն կ'ըսկսի թրթռալ խոր լռութեան մէջ, թրթռացներով իմ հոգիս եւս որ ա՛լ արթնցած էր... Իսկոյն նորէն վար կը վազեմ եւ փոխանակ չիփչիտակ ձայնին ուղղութեան երթալու, Յիսուսի գերեզմանը կը գիմեմ, որոյ շուրջը երկիցս կը դառնամ... Զգիտեմ ինչո՞ւ համար քայլերս յանկարծ կ'ուղղուին Յովսէփ Արեմաթացւոյն գերեզմանը: Ի՞նչ խաւար, Տէր Աստուած, եթէ հոն աղօթող գիսախուռ մազերով հապէշ քահանային

երկու աչքերը չըլլային, երբեք պիտի չը կրնայի գտնել այն պզտիկ դուռը ուսկից ներս ինկած էի: Ճշմարիտ գերեզման մը... Դուրս կը նետուիմ եւ կարծես թէ մէկը կը հալածէր զիս, կը սուրամ արագ արագ եւ կը հասնիմ Գողգոթային առջեւ... Չայնը նորէն լռած էր, բայց այս անգամ կը փորձուիմ վեր ելնել: Հազիւ սանդուղին գլուխը կը հասնիմ, մեղեդին կ'սկսի... Հասած էի հոն ուր կը փնտռէի հասնիլ: Անհուն տաճարին մէջ տիրող մեռելութիւնը կեանք կ'առնէր հոս... Լոյս կար հոս: Երեք կարգ ուսուկիներ, շարականներու առջեւ ծնրադիր, իրենց աչքերը սեւեռած սեւ տողերու վրայ, ոսկեղէն քառաթեւ խաչին առջեւ, որուն վրայ գամուած էր Յիսուս ոսկեղէն, պըսպղուն գոհարներու համակ փարթամութեան մէջ թաղուած, կանացի էն անուշ, էն հոգեցունց շեշտերով կ'երգէին ու կ'երգէին: Իմաստուն կուսաններն էին ասոնք որ իրենց ձիթալիւր կանթեղներով կը հսկէին, մինչ իրենց այրերը խոր քնոյ մէջ ընկղմած էին՝ Յիսուսի գերեզմանին շուրջը:

Անդիմադրելի թաղուն զօրութենէ մը մղուած, ես ալ կը ծնրադրեմ ձեռնամած, պաղ մարմարին վրայ, եւ հոգեւով յափշտակուած այդ երգեցիկ դպրութենէն ներս հետ պահ մը կը վերանամ հոգեկան երանոտ կեանքի մը մէջ...: Շատ չանցած, անոնց հոգեյոյզ մըրմունջը մանկական անուշ օրօրի մը պէս կ'ազդէ վրաս, ու կը մրափեմ՝ պաղ պատին կրթնած: Մարմինս թէպէտ խորին թմրութեան մէջ ընկղմած, հոգեւոյս մէջ նոր կեանք մը կ'սկսի սակայն, ու կ'երազեմ...: Կեանքիս բոլոր դըրուագները պատկերացած, ստուերախաղի մը պէս, կ'անցնին կարգաւ, որոնց մէջ էն փայլուն, էն լուսաւոր կէտն էր այն երջանիկ ժամանակը զորս

դպրոցին մէջ անցուցած էի: Կը տեսնէի իրապէս կը տեսնէի այն պատկառելի եկեղեցականը, որ դիմացս կայնած, խորհրդաւոր աչքերը վրաս սեւեռած կրօնի ու բաբոյականի սերմերը կը ցանէր սրտիս ու հոգեւոյս մէջ, սերմերը զորս ապա արտաքին աշխարհի փուշեր պիտի փորձէին խեղդել: Բայց մայրս հոն էր, կը հսկէր վրաս, մայրս որ աշխատասիրութեան մեծ հերոսուհի, գլխերը կանթեղին լոյսով կը աքնէր իրեններուն բարօրութեանը համար, հօգեպակասութիւնն անգգալի ընելու համար մեզ որ որք մնացած էինք: Լուսնայրս կրցած էր յաղթական ելնել կեանքի պայքարին մէջ, իր ասեղն ու մասնոցը յաղթած էին կեանքի ամէն դժուարութեանց: Ինչ էր մօրս այս ոյժը, ինչ թաքուն զօրութիւն էր որ կը գործէր անոր մէջ, ինչո՞ւ ես կը տկարանայի կեանքի ու եւէ դժուարութեան առջեւ, մինչ նա կը զօրանար ու կը պատրաստուէր կռուելու: — Ի վճիռ կը փնտռէի այդ զօրութիւնը, երբ մայրս յանկարծ կանգնեցաւ դէմս ու ձայնեց. — Հաւատա՛ք, սո՛ւրբ հաւատա՛ք: Այս ձայնէն արթնցայ մինչ լոյսը ճեղքուած էր արգէն, եւ ուս երգեցիկ կիները, այս անխոնջ հաւատացեալները, որք անշուշտ մայրեր էին, տակաւին կը շարունակէին իրենց երգեցողութիւնը միշտ աւելի՛ սրտաշոյզ, աւելի՛ խանդոտ շեշտերով: Այս վառ հաւատքը տեսնելով, չզղջացի դիշեր մը անցընելու համար Գողգոթայի ստորոտը, եւ երբ մօրս քով դարձայ, տեսայ որ կ'աղօթէր...

Կիսահաւատ ներս մտած էի, լիահաւատ դուրս ելայ...: Բ. Պ.



ԴԱՐԱՎԵՐՋԻ ԲԱՐՔԵՐ

“ԱԿՆՈՑՍ,”

[ԹԵԹԵՆՍՈՒԼԻ ՄԸ ՕՈՒՇԱՑԵՏՐԷՆ]

Ա

ԴՊՐՈՑԷՆ ելայ չելայ՝ ըրի բոլոր այն բաները որոնց դուք « շիքնալ » կ'ըսէք : Մէջը ճեղք գլխարկ , ոսպէսբիէն օձիք , ճերմակ էսքարբին , կէթո՛ւ , շառք գռավաթ , պոլթօնիէն ֆլէօռի , Ժիլէի տեղ սև մետաքս գօտի , կռի-րէն ձեռնոց , լաստիկի պէս քալուածք , Թո՛ւ՛թ՛ա՛լա՛շիք : Նև առանց էսմէրեանի մը դիմած ըլլալու՝ ակնոց դնել սկսայ . 5 խուռուշնոց զոյգ մը ապակիներ որ աչքերուս խերն անիծեցին :

- Ինչո՞ւ այդ ամէնքը , պիտի հարցնէք :
- Որովհետև ուրիշներ անանկ կ'ընէին :

Բ

Ձեմ յիշեր ո՛ւր պատահեր էի ես անոր , միայն սաչափը գիտէի որ ունեցած փսոր մը խելքս ալ վրայ էի տուել , ու իրեն նկատմամբ կ'զգայի բան մը որ անուն չունէր ինծի համար , և որուն դուք « սիրահարուի՛ր » կ'ըսէք , ի՛նչ :

Մինչև ան ատեն (քիչ մը նազիկ խօսելով) իմին կոյս հոգիիս վրայ ուրիշ սէրի մը չուր չէր փռուած :

Հիմայ սէրս ան աստիճան գեղուն էր լանջքիս տակ՝ որ կը վախնայի թէ սիրտս յորդէր ա՛լ :

Գ

Ի՞նչ հարկ երկար բարակ պատմել ձեզ հոգիիս կրած սուր չարչարանքները , անուշ քուներուս կըռտիլը , իմ երկչոտ փափաքներս ու իր տունին առաջքի գիշերային բէրիշա՛ն դեգերումներս . հերիք է որ ըսեմ ձեզի թէ 23 Մայիսներս , ածելիէն մի՛շտ համբուրուած դէմքս և ոսկի թելով (?) շիք ակնոցս — որուն անգութ աքծանին տակ քիթիս սէմէրը կը հեծէր , — դեր մը խաղցած էին անոր յիշողութեանը մէջ :

« Ան քուկին խուռունթո՛ւտ է » պիտի զուրցէք : Թերևս :

Դ

Դիպուածը ա՛ռչափ աղւոր ժպտած չունէր ինծի :

Ն*** եանէնց սուռուէին պատահեցանք իրարու :

Պար , պար , պար :

Սրունքներուս հարցուցէք թէ ի՞նչ քաշեցին ատ գիշերուան ցատկուտութիւն , ու չըր-թունքիս՝ որ հաճոյալի խօսքերու ամբողջ պաշարը թափեց անոր առջև , անո՛ր որ սակայն լուռ կը մնար միշտ :

Ե

Մաղիկներ կան, լեռի, խրոի ծաղիկներ՝ որոնց ո՛չ անուն ունենալնին յայտնի է և ոչ ալ հոտ, ինչպէս աչքեր, որոնք բան մը կ'ըսեն քեզի, այո՛, ու բա՛ն մըն ալ չեն ըսեր :

Իր նայուածքը կասկածոտ և անհանգիստ կ'ընէր զիս :

Արդեօ՞ք...

Բայց վերջապէս այդ անուշ աչուրներուն մազնիսացումէն յետոյ ի՞նչպէս չը տաբուէի խորհիլ խել խօլ բաներու վրայ :

Զ

Ավէք թիւպ սիկառ մը բերանս՝ մինակս կը պտըտէի դուրսի ամայի սալօնը, երբ ինքը ոտքի ու նուագի ժխորէն դուրս ցայտեց յանկարծ, յոգնած, կարմրած, փետուր էվանթալովը այտերուն կրակը մեղմելով :

— Ներեցէք Օրիորդ, ըսի մէկէն, իրեն յառաջանալով, պիտի ըսէի որ... Ի՞նչ պիտի ըսէի, ես ալ չը գիտեմ, բայց իր խռովիչ կերպարանքը, ճիտին բամպակ տէքօլթէն ու քլօշ ժիւրին հեւքոտ ֆուռֆուռն պահ մը մոռցնել տուին ինծի « պատշաճից օրէնքները » :

... Հազիւ իր էյֆէլ գանգուրներուն՝ ճակտիս մեղմիւ հպիլը զգացի, ու այն ի՞նչ բոց պրկունքս գգուելու վրայ էին այտերուն վարդը, երբ հովահարն է կը գոցուի և իր ոսկորէ կոնակը շա՛րբբ... հարուած մըն է կը փակցնէ երեսիս : Այս ամէնքը փաղնէօվական դիւրաշարժութեամբ մը :

Է

Ակնոցիս ապակին ճաթած էր ու քիթս սկրդուած :


Հիմայ որ տարին անցած է անկից ի վեր, քիթս թեթեւ մը պահած է դեռ իր նշանը, ու ես պահած եմ կոտրած pince-nez « ի յիշատակ » :

Եւ դո՛ւք, ակնոցակիր ժէօն-ժաններ, երբ օրին մէկը սատանան փորերնիդ մտած՝ ձեզի ասանկ բանի մը թելադրէ, ամէն բանէ առաջ չի մոռնաք ակնոցնիդ հանելու :

Գալով այն քիչ մը անախորժ շարժումին, — զոր կրնայ ըլլալ որ ընդունիք ինծի պէս, — յոճախ սապէս կը թարգմանուի կենցաղագէտ երիտասարդներու պորսան :

« Զեմ ուղեր, բեր ճեպս ձգէ »

Ընդօրինակեց
ԹԷՈՂԻԿ



ՏՆՏԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԴԼՈՒՆ Ա.

2. Տղայոց ոյժերուն զարգացումը. — Մարմնամարզ

(Շարունակութիւն ժէ քիւն)

Առողջապահական խնամքներն ու խորհուրդները նպատակ ունին առողջութիւնը բարւոքել կամ պահպանել: Մարմնական մարզանքներն ալ այս գործը շարունակելով, կը զարգացնեն, կը զօրացնեն և ճապուկ ու դիւրաթեք կը դարձնեն անդամները, և այս կերպով մարմինն ևս քան զևս կամքին ծառայութեան ընդունակ կ'ընեն: Երբ այս մարզանքներն ու շարժումները կանոնաւոր կարգաւորութեամբ մը ի գործ դրուին, կը կազմեն մարմնամարզը (gymnastique): Մարմնամարզի դասն անժխտելիօրէն մեծ օգտակարութիւն մ'ունի եւ բոլոր եւրոպական վարժարաններուն մէջ պարտաւորիչ տեղ մը կը գրաւէ: Բազմաժախ ու կնճռոտ գործիքներու պէտք չկայ: Նախ, շատ մը մարզանքներ ունեն գործիքի պէտք չունին: Գալով ուրիշ գործիական մարզանքներու, տարրական և իրապէս օգտակար գործիքներով միայն պէտք է շատանալ, զորս կրնանք գտնել կամ հաստատել ամէն տեղ: Վերջապէս մարմնամարզի նպատակը պէտք է ըլլայ կանոնաւոր եւ յառաջդիմական կերպով զարգացնել մարմնոյն ուժերը, և ի հարկին վերահաստատել անոնց հաւասարակշռութիւնն ու ներդաշնակութիւնը: Մարմնամարզը պէտք է ըլլայ առողջապահական մարզանք մը, որուն վրայ պարտի հսկել տնօրէնը կամ դպրոցին բժիշկը, և ոչ թէ դիւրաշարժութեան կամ յանդգնութեան հրաշալիքներ յառաջ բերելու միջոց մը: Կանոնաւոր մարմնամարզի դասեր պէտք է տալ, որոշեալ օրերու եւ

ժամերու մէջ, բայց ուրիշ տեսակ մարմնամարզ մ'ալ կայ, զոր կրնանք զործնական անուանել, եւ որ կը բաղկանայ ամենօրեայ աշխատութիւններէ, արշաւներէ, խաղերէ, շարժումներէ: Թերեւս առաջինէն աւելի կարեւոր, պէտք է յարատեւ խնամքներու առարկայ ըլլայ, եւ դաստիարակը պէտք է գիտնայ օգուտ քաղել այս սովորական մարզանքներէն, պատշաճ ուղղութիւններ ու խորհուրդներ տալով անոնց, զբօսանքներու եւ պտոյտներու միջոցին: Բայց եթէ պարտի այս կերպով օգտակար ընծայել տղայոց զբօսանքները, եթէ կարենայ մինչեւ իսկ ճարտարօրէն թելադրել կամ քաջալերել անոնց խաղերը, պէտք է որ զգուշաւորութիւն եւ ճարտարամտութիւն ի գործ դնէ, բնաւ չբռնադատէ տղայքը, ալ անոնց թողու ազատօրէն ընտրել իրենց զուարճութիւններն ու մարզանքները: Տղայք այս պայմանաւ միայն իրապէս պիտի զբօսուն, իրենց տրուած գործնական խորհուրդներէն օգտուելով հանդերձ:

Այժմ քննենք, — դաստիարակին քաղելիք օգուտները ցոյց տալով հանդերձ, — աշակերտներուն առօրեայ մարզանքները, որք են. քայլել, վազել, ցատկել, մագլցել, սահիլ, գօտեմարտիլ (կիւրէշմէք), լողալ:

1. Քայլել. — Ամէնէն սովորական եւ ամէնէն օգտակար շարժումը զոր միակ օր մ'իսկ պէտք չէ զանց առնել, քայլելու մարզանքն է: Այս մարզանքը շարունակաբար, արագութեամբ և ճարպիկութեամբ ընելով, մարմինը կը հրահանգենք ու կը զօրացնենք, առանց փոյթ ընելու օդն ու գէշ ճամբաները: Այս մարզանքը մանաւանդ փրկարար է, երբ կարենանք լեռներէն վեր ելնել, ժայռերու բարձունքը մագլցել, անանցանելի համարուած ճամբաներու մէջ պտոյտներ կատարել...

2. Վազել. — Վազքը թոքերն և ստորին անդամներուն (սրունքներուն) մկանները կը զօրացնէ, դիւրաշարժ կ'ընէ եւ յաճախ մեծամեծ օգուտներ կ'ընծայէ: Տղայք վազելու պէտք է վարժեցնել, հեռաւորութիւն մը որոշելով, եւ տղայոց նախանձայուզութիւնը զրգուելով, այսինքն անոնց միջեւ մրցում մը հաստատելով: Բայց միանգամ

մայն պէտք է զգուշութիւններ ի գործ դնել եւ խնամք տանիլ: Պէտք է մանաւանդ հրահանգել որ այս մարզանքի միջոցին, աշակերտը թեթեւ հագուած ըլլայ եւ ուղիղ դիրք մը պահէ: Կուրծքը դէպ առաջ կրել, զայն նեղող ամէն արգելք վերցնել, կարելի եղածին չափ թեւերը սեղմել կողերուն դէմ, մարմնոյն վերին մասը փոքր ինչ յառաջ ծռուել եւ ջանալ որ շնչառութիւնը չարագանայ, վերջապէս մարզանքէն անմիջապէս վերջ չուտով նորէն հագնիլ այն հագուստները զորս բանաւորապէս հանած էր վաղքի ժամանակ, աւասիկ ասոնք են համառօտիւ հետեւելի կանոնները: Ասկէց զատ պէտք է ամէն տարապայման ճիգ արգիլել. թէ՛ երազ ու հեւքոտ շնչառութենէն եւ թէ՛ դէմքին տարապայման կարմրութենէն դիւրաւ կրնանք ճանչնալ խոնջած, պարտասած աշակերտները, որոնք հանգստանալու պէտք ունին:— Վաղքը մասն կը կազմէ ինչ ինչ ընտիր խաղերու, ինչպէս են գերառիկ (եսիր արմաճա) խաղը, չրջանակ դարձնելու խաղը, որոնք շատ օգտակար են՝ վասն զի թեւերն ու սրունքները միանգամայն կը մարզեն:

3. Ուսմուլ.— Վերէն վար, վարէն վեր, կամ բացութիւն մը կամ միջոց մը կտրել անցնելու համար ցատկելը կը կազդուրէ, կը զօրացնէ ոտքերը, կուրծքը եւ ողնայարը միանգամայն: Զողերու օգնութեամբ ոտնումը բազուկներուն մկաններն ալ կը զօրացնէ: Պէտք է ուշադրութիւն ընել որպէս զի մեկնման տեղը սահուն, լպիրծ չըլլայ, եւ ոչ ալ ժամանման տեղը չափազանց կարծր: Վարէն վեր ցատկելու մասին դիտել տանք նաեւ թէ ձողն ու լարուած լարն, որոնց վրայէն պիտի ցատկէ աշակերտը, պէտք է կարգադրուած ըլլան այնպիսի կերպով մը որ անմիջապէս վար իյնան ինչ տղուն ոտքը թեթեւ մը կառչի անոնց, ապա թէ ոչ կրնայ ըլլալ որ տղան քիչ թեր լարին վրայ իյնայ եւ անկումը վտանգաւոր ըլլայ:

4. Մագլցել.— Մագլցելով մարդ մասնաւորապէս կը շարժէ մարմնոյն վերին մասերը, մանաւանդ թեւերը: Նախ մարզանքներն ի գործ կը դրուին երկու նեցուկներու վրայ հորիզոնաբար հաստատուած

ձողի մը օգնութեամբ: Այս մարզանքներն են՝ կախուիլ, մարմինը վեր բարձրացնել մինչեւ որ կզակը հասնի ձողին. նոյնպէս ձեռքերով քալել ձողին երկայնութեամբ, կախուած մնալով հանդերձ. մարմինն յառաջացնել եւ ապա ետ քաշել, վեր ելնել ու ապա վար իջնել երկու զուգահեռական ձողերու միջեւ որոնց վրայ կը յենուն կամ կը կախուին ձեռքերը, առանց ոտքերը հողին դպցնելու: Այս մարզանքներէն վերջ, կրնանք տղայոց մագլցել տալ նաեւ նախ ձողի մը, ապա կայմի մը, վերջապէս կախուած չուանի մը վրայ, նախ վերին եւ ստորին անդամներուն (ձեռքերուն եւ ոտքերուն) օգնութեամբ, եւ ապա միմիայն թեւերուն միջոցաւ: Պտոյաներու միջոցին ծառերու եւ ժայռերու վրայ մագլցումը կրնայ վտանգաւոր ըլլալ մինչեւ աստիճան մը: Ուրեմն դաստիարակը խոհեմութեամբ միայն պիտի թոյլատրէ այս մարզանքները. սակայն պէտք չէ չափազանց երկնոտ ըլլալ, մանաւանդ եթէ իր աշակերտները գիւղի մէջ մեծցած են: Ամէն պարագայի մէջ պէտք չէ երբեք աղաղակներով ազդարարել տղուն եւ ո՛չ ալ այնպիսի կերպով մը որ կարենայ զայն ահաբեկեայնապիսի վայրկեաններու մէջ երբ տղան պէտք ունի իր ամբողջ պաղարիւնութեան:

5. Սահիլ.— Շատ մը բժիշկներու կարծեօք, սառոյցի վրայ սահիլն ամէնէն փրկարար ու կազդուրիչ մարզանքներէն մէկն է: Մաքուր օդը, ցուրտին սզդեցութիւնը, արեան արագ շրջանը, մկաններուն ճիգերը, այս ամենքը կ'ազդեն մարմնոյն բոլոր մասերուն վրայ միանգամայն: Տղայք դիւրաւ կը սովորին այս մարզանքը, որ միւս բոլոր մարզանքներէն աւելի վտանգ չընծայեր: Ուստի դաստիարակը ձմեռը կրնայ սահախաղէր կազմաւորել, փոյթ տանելով որ նրուազ փորձառուները չխառնուին ամէնէն ճարպիկներուն հետ, եւ թէ ո՛չ ասոնք եւ ո՛չ ալ անոնք զիրար չգրգռեն անխոհմով ճիգեր ընելու:

6. Գօտմարտիլ.— Գօտմարտը յաճախ կը կազդուրէ կունակը: Աշակերտը նախ այս մարզանքին պիտի պատրաստուի առարկայ մը վեր վերցնելով, թեւը յորկած, ձեռքեր-

ուն և ոտքերուն ծայրին վրայ ծռելով, այնպիսի կերպով մը որ մարմնոյն մնացեալ մասը չդպչի հողին: Նոյնպէս ձեռքով ծանր լախտեր շարժել: Չափահաս տղայք գրեթէ պէտք չունին քաջալերութեան՝ գօտեմարտելու համար: Անոնք շատ կը սիրեն փոխադարձաբար չափել իրենց ոյժերը: Միայն թէ խնամով հսկելու է որ վէճեր ու կռիւներ յառաջ չգան: Մանաւանդ իսկոյն խաղէն արգիլելու է այն տղաքներն որք շուտով կը բարկանան, և խստիւ արգիլելու է բոլոր վտանգաւոր հարուածները...

7. Լողալ. — Լողանք և լողանք փրկարար են թէ՛ մաքրութեան և թէ՛ առողջութեան պահպանման տեսակէտով: Լողալը կը կազդուրէ մարմինը և մարմնամարզի ընտիր հրահանգ ո՞ր է, և միանգամայն քաջութիւն և անվեհերութիւն ներշնչելու միջոց մը:

Անտարակոյս աւելորդ է պատուիրել դաստիարակներուն, այս վերջին հրահանգին համար, ձեռք առնել այն բոլոր զգուշութիւնները զորս կը պահանջեն խոհեմութիւնն ու ահարկու պատասխանատուութիւնը որ կը ծանրանայ իրենց վրայ:

3. Զգայարարական դաստիարակութիւնը (Շար.)



Սիրելի բարեկամներս,
Անհանգստութեան պահառու այս անգամ վիպակս չգրած ըլլալու համար ներողութիւններ կը խնդրեմ: Զերդ
Ս. ԲԱՐԵԼՆԱՆ

ԼՕՐԱՆ ԹԱՅԼԱՏ

(Շար. Ժ. Քիւեհն)

ԱՅՈՒ ոտանաւորին գաղափարը, որ առանձին ա՛յնքան մեծ ու նոր բան մը չէ որքան ոտանաւորին *formes* իր ամբողջութեանը մէջ, հին աշխարհիկ վայելքներու ունայնութիւնը որ ա՛յնքան փափուկ ու զգայուն մեղեդիով մը կ'ողբացուի բանաստեղծէն, ինձի յիշել կուտայ իր միւս ոտանաւորներէն Pantoum մը գոր չեմ կրնար գանց ընել հոս:

Աղբիւրին ետեւ ինչպէս եղջերուն՝
Սիրտս ալ կը հեծէ քու գեղոյդ ետեւ,
Հին Գիրքին մէջ ուր երգեցիր Թեմեւ
Կը լքեմ լալը հեռուի սէրերուն:

Սիրտս ալ կը հեծէ քու գեղոյդ ետեւ:
Գիտե՞ս, մեր այտին բալըր մարմրուն,
Համբոյրներն երկար՝ հեռուի սէրերուն,
Բայց ո՞ւր են ամբան ծաղիկներն անտեւ:

Կը յիշես, հոգիս, մեր բալըր մարմրուն,
Մարուկները Թոյլ, վազքերն հեւի հեւ,
Բայց ո՞ւր են ամբան ծաղիկներն անտեւ,
Վալսերը կշռող քայլերն ոստոստուն:

Երծաղներն հիմայ, վազքերն հեւ ի հեւ
Փոխուեցան, հոգիս, լըռութեան մ'անհուն,
Վալսերը կշռող՝ քայլերն ոստոստուն,
Կը նիրհեն, միշտ համր ստեղծներուն ետեւ....

Եթէ բերուինք բուն իսկ իր սիրոյ շըրջանին մէջ, եթէ բուն իսկ իր ապրած սէրը թղթատենք իր բոլոր խանդոտութեան մէջ, պիտի տեսնենք որ Թայլատ բոլորովին մաքուր ու տեղ տեղ նաև տխուր չեղտ մը կ'առնէ երգելու համար բոլոր զինքը գինովցնող սարսուռները: Նուրբ ու փափուկ մանրամասնութիւններ բոլոր իրենց իրական երանգաւորումովը, զնելով անոր մէջ տեսակ մը ծածուկ գաղափարայնութիւն մը զոր իր մտքին ամէնէն մաքուր տենչերը իրեն կը թելադրեն: Այսպէս՝ բաղեղներու ստուերոտ անդորրին մէջ՝ յիշատակներու անդրադարձումը մեռած սէրերու, կամ աղօթք մը

անցեալէն՝ փափուկ անօսը շղարչներու շուշանութեան խոր թեթեւ տրոփում մը՝ զոր կը թուի իմանալ, դիցուհիի (որոնցմէ շատ յիշած է) մարմարներուն խոնաւութեանը վերեւ աննիւթութեան մը հրայրքն անճառ ու յաւիտենական... Դիցուհիի անուններ հոս հոն, ամենքն ալ մարդկային, ողջ դէմքերու պէս, որ մէյ մէկ ցաւեր ունին ու չեն ուզեր յագենալ իրենց տենչերէն:

Ամէնէն մեծ տենչը աննիւթանալու յիմար տենչն է որուն անկարելիութիւնը այս աշխարհին մէջ, կը տխրեցնէ բացարձակ իտէալիզմի հետեւողները: Ամէնէն մեծ հաւատացողները ամենէն տխուրները եղած են: Լամաութիւնի տաղերը տեսակ մը զգայուն ու մտածկոտ տխրութիւն մը կը բուրեն հակառակ իր ջերմ հաւատքին: Աննիւթանալ, այսինքն ըլլալ ինչ որ անճառն է, ինչ որ բացարձակին մէջ կ'ապրի, վե՛ր ամէն մտածողութենէ, առանձին, անտենչ, առանց մարմինին պագչոտութեանը ու տառապանքին, առանց ջիզերու ցաւոտ կամ անառակ գալարումներուն, առանց ո՛չ մէկ բանի որ աշխարհիկ մարդուն կը վերաբերի, աննիւթանալ մէկ խօսքով՝ երջանկանալ, ամէնէն բնական բանն է իրենց համար մեռնելէն վերջ: Ուղեղին կամ պարզ նիւթին բացատրութեանը մէջ գիտութիւնը ինչ լուսաւոր դերոյ մը կամ ինչ համոզիչ ըմբռնում մը ունի որ կարենայ դատապարտել աննիւթանալու այդ վսեմ գաղափարը: Քանի որ անիկա կը հաստատէ թէ բոլոր ուժերը, որոցմով կեանքը երեւան կուգայ, յաւիտենական են և թէ միայն երեւութապէս կը փոխուին կամ կը փոխանցուին առանց երբեք պակսելու, ատկէ կը հետեւցուի թէ՛ նիւթին և թէ՛ մեր մտքի աշխարհին անմահութիւնը, երբ անգամ մը դաւանինք թէ երկուքն ալ բոլորովին անջատ ուժեր են, վաղանցիկ ներդաշնակութեան մը համար իրարու փարած:

Թայայտ Ռոմանս մը ունի որ իր դաւանանքէն շատ բան կը պահէ, ու բուն իսկ յատկանիչը ցոյց կուտայ իր դրութեան: Խարուած սրտի մը անհուն թախծութեանը հետ, անյողդողդ յոյսի մը գեղեցիկ լուրջ գունախառնումը կայ հոն, առանց վիրաւոր-

ուելու մահուան խոնաւութիւններէն:

Պիտի նորէն գաս, քու ձեռքըդ ըսպիտակ
Դնել ճակտիս դեռ քու սէրէդ դալկահար,
Պիտի գաս, բայց վերջալոյսիս աղօտ, սառ,
Երբ ա՛լ սիրտըս պիտի դադրի լուռ, անզա՛րկ:

Պիտի ըսուած ըլլան աղօթք, հուսկ բոյրեր
Թրջեն պիտի քունքերըս ու մագիս փունջ,
Մեղմիկ նըշոյլը կանթեղին տըխուր, մունջ,
Պիտի զգուէ գմայլուն աչքիս լուռ եթեր:

Պիտի նորէն գա՛ս, դուն որ դառն ինձ եղար,
Երբ դեռ կայտառ էի եւ դեռ գեղալիր,
Դուն որ ինձմէ խլեցիր, ամէն բան առիր,
Ի՞մ դագաղիս վըրայ լալու մայրաքար:

Ու շիրմին վրայ ուր քաղերներ ամեցուն,
Բարեպաշտիկ ձեռքերու պէս, խաչին մօտ,
Կ'երթան փարիլ ծաղիկներու խորհրդոտ,
Արտասուքներ պիտի Թափես դուն հնչուն:

Դուն պիտի լաս, եւ հողին վրայ սեւ ու գէջ
Պիտի՝ մանուկ՝ դողայ հոգիս այն ատեն,
Ու արթննայ պիտի երկար իր սուգէն,
Տեսնելով քեզ ա՛յնքան տօգոյն լոյսին մէջ:

Շուշաններու վըրայ մեծ ու խնկաւէտ,
Ցայգիթեռնին Թըռիչին մէջ պերճհնչուն,
Պիտի ապրի հոգիս շող, շունչ, բոյր անհուն,
Քեզ խօսելու մեր խինդերուն վրայ անհետ:

Սիրային ոտանաւոր մըն ալ, «Ան որ խամրեցաւ», որ հակառակ անհաստատ ու պագչոտ սէրերու զոհուածի մը ուղղուած ըլլալուն, նորէն գգուոտ ու անուշ բան մը ունի, մանաւանդ վերջին երեք տողերուն մէջ: Երբ կ'սպասուի որ ամէնէն կրայոյզ ու մոլեգին տողերը ապրուած տառապանքի մը բոլոր հրայրքը դուրս թափէին, յաճախ ամէնէն մաքուր ու գոլտրիկ մեղեդին կուգայ թառիլ բանաստեղծին շրթունքներուն վրայ:

Գիտե՛մ թէ սէրը խամրեց քու երես,
Ձոհ եղաւ մարմինդ այս չար որսորդին,
Թէ իր բուռն հոգեր քեզ դըռմը տուին
Պատիժի մ'անանց, յաւիտենապէս:

Թէ մահիճներու մէջ վատ՝ ծախեցիր,
Սուրբ Թարմութիւնը կոշտ հոգիներուն,
Ու զեռ շիկնութեամբ, զեռ խիճողով հմայուն,
Իսկոյն յարկերու տակ ինկար զագիր:

Գիտե՛մ թէ ա՛յ փակ եղաւ քու հոգիդ,
Գահարներու մէջ ժպտող լանջող ազուր,
Սիրտ մ'ունի ծերուկ, նախանձուտ, անզօր,

Թէ կ'անցնի ամէն բան, ծայնդ ու ժպիտ,
Թէ կը ճերմկնան ա՛յ քու սեւ մազեր,
Բայց տըղու համայրդ ինձ քաղցր է յոյժ զեռ:

* * *

Եթէ սիրային ոտանաւորներէն հեռա-
նանք, ու մեր ակնարկը սեւեռենք այն ո-
տանաւորներուն վրայ որ առանձին առաւել
կամ նուազ նոր մտածումներ են, կամ նոյն
իսկ միայն արուեստոտ հանգերձանքներ, ա-
ռանց մեծ գաղափար մը դուրս բերելու ի-
րենց ներդաշնակ օրօրումներէն, պիտի
տեսնենք որ միեւնոյն յատկանշական երան-
գը ունի Թայլատ, միեւնոյն գգուտ, պըջ-
րոտ ու տխուր գունախառնումը. տեղ տեղ
վարանումներ որոշ գաղափարի մը յայտնու-
մին մէջ, անուշ, երազուն տարտամութիւն-
ներ, մշուշի մը պէս որուն տակ կը հալի,
կ'անհետի, կը մոռցուի աշխարհը իր բոլոր
զազրուածներ ու ցաւերուն մէջ: Տեղ տեղ
համայրոտ հիացումներ, արբիւռ սեւեռում-
ներ: Տեղ տեղ նկարներ, իրերուն ամէնէն
փափուկ, տխուր ու մերթ մտածկոտ ար-
տայայտումը, նուրբ մտերիմ կապակցու-
թիւնով մը հոգիին հետ որ կը ներծծէ դա-
նունք:

Իրիկնանկար մը.

Վերջին կրակը կը մարի հոգին վերայ մառախլուտ.
Պատուհաններ չե՛ն փայլիր, տանիքները չե՛ն ծխար:
Գորտերը լոկ կը տըտռան, ու իրենց ծայր տըկար
կը մարմըրի գիշերուան շրջարշներու խորը մութ:
Աստղերը չե՛ն տակաւին վառուեր, մեղմիկ ու լըռին
Հովեր, վերջին բոյրերու մէջ Խեւերնին ծածանուն
կ'անցնին մրափին վրայէն պուրակներուն, հունձ-
քերուն:

Կաթէ նշոյլ մը ճերմակ տանիքներու կատարին,
նշոյլներով արծաթի կը ցանուի հողը նիրհուն.
—Ու հոն վարն, արեւելքէն, ա՛յ դուրս կուգայ սա
լուսին:

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԱՆՆ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԶ ԴԱՍԵՐ

Բ

Դիտական Ծանօթութիւն, Գիտութիւն,
Իմաստասիրութիւն

Նախորդ դասին մէջ յիշուած չորս հար-
ցումները շատ շուտ չմոռնանք, պէտք ու-
նինք անոնց: Այդ հարցումներէն վերջ, ա-
նոնց պատասխանն առնելով իսկ, անհան-
գստութիւն մը կը զգանք. մտաւոր լիկանք
մը մեր վրայ կը տիրապետէ, մինչեւ որ
ներքին հաճոյք մը զգայ այդ հետաքրքրու-
թեան մեզ առթած կամ պատճառած գոհա-
ցումին փայլը չըլլայ:

Այլևս ծանօթութիւններ կազմեցինք,
կան ուրիշներ ալ որ կազմած են. ուրեմն
անոնց հետ համահաւասար ենք, անանկ չէ՞:
Կ'ուզէ՞ք որ քայլ մը ևս առնենք. այո՛, —
օ՛ն ուրեմն:

Իրի մը կամ երեւոյթի մը և կամ յաս-
կութեան մը գոյութիւն ունենալը գիտենք,
ուրեմն ծանօթութիւններ կազմած ենք:
Հոս, այս վայրկենիս, պիտի տարբերինք ու-
րիշներէն, կամ ուրիշներ, ահա հոս է որ
մենէ տարբերած են: Եթէ այդ ծանօթու-
թիւններուն խորը թափանցելով, կարենանք
ըսել կամ բացատրել թէ ինչո՞ւ համար եւ
ինչպե՞ս այս այսպէ՛ս է, կամ պե՞տք է որ
այդպէս ըլլայ. բնաւ մի՛ կասկածիք թէ
ո՛չ թէ քայլ մը, այլ նոյն իսկ համահաւա-
սարութենէն բաւական մեծ ուսում մը ը-
րած ենք, այսինքն ծանօթութիւնը գիտա-
կան ըրած ենք: Եթէ, օրինակի համար, բա-
ցատրենք կամ ըսենք թէ ի՞նչպէս կուգան
անձրեւ կամ ձիւն: Եթէ կրնանք բացատ-
րել թէ ինչո՞ւ համար ձմեռը արեւը, որ
շատ մօտ կը գտնուի մեզի, չի տաքցներ, եւ
ընդհակառակն ամրան մէջ՝ հեռու գտնուե-
լով հանդերձ մեզ չափէն աւելի կը տաք-
ցնէ, գիրուկներուն ալ անհանգստութիւն
տալով, եթէ կրնանք, գիտական ծանօթութիւն
կազմած և գիտնական մակդիրին արժանա-
ցած ենք: Վերոյիշեալ օրինակներն ամէնն

ալ ծանօթութիւններ են, անանկ չէ՞, բայց մեր միտքը լիովն , այսինքն բանականութիւնն ու փորձառութիւնը կամ մէկ բառով դատաւորը , կը պահանջեն որ ցոյց տանք , այսինքն ապացուցանենք այդ ճշմարիտ կարծուած ճշմարտութեան կամ ծանօթութեան ճշմարտութիւնը կամ գոյութիւնը , նախնական ուրիշ ծանօթութիւններով :

Եթէ սակայն այդ ուսումնէն վերջ յոգնեցանք ըսելով կանգ առնենք , ու պարծենանք մեր գիտցածին վրայ , քափքփած մըն ենք և ոչ ուրիշ բան , որովհետեւ շատ անգամ ծանօթութիւնները ծովը ինկող փայտի կտորներու կը նմանին : Ուրեմն պատրաստուինք պրծելու համար այդ թափթփածութենէն , անյարակցութենէն , այսինքն կապենք զանոնք ջուկ մը , խումբ մը կազմելու , և մեր ստացած ծանօթութիւնները ցրուելու սպառնացող վտանգին դէմ թումբ մը կանգնելու համար : Այսպէս եթէ մեր գիտական ծանօթութիւնները , իրարու հետ , գոհացուցիչ կերպով կարենանք կապել , եւ անոնցմով համեմատելի ջուկ մը , խումբ մը կազմել , թումբը շինուած է , եւ Գիտութիւնը անոր վրայ կանգնած՝ կը հեզնէ իրեն սպառնացող վտանգները : Ուրեմն գիտութեան հետեւողներ ենք , քանի որ , ինչպէս վերը ըսուածներէն կ'երեւի , քանի որ գիտութիւնը յօրինող բանը՝ զանազան ծանօթութիւններ իրարու հետ կցող կապը կամ աղբսն է , կամ թէ ըստ Ֆրանկլինի՝ «Գիտութիւնը իրարու հետ կապուած ծանօթութիւններու զրութիւն մըն է» :

Յիշենք հոս «նման գնումն սիրէ» առածը . կարծես ճիշդ այդ առածին համեմատ , նման ծանօթութիւնները խումբ մը , ուրիշ նմաններ ուրիշ խումբ մը , եւ ուրիշ նմաններ ալ զանազան խումբեր կազմելով կը յօրինեն զրութիւններ կամ գիտութիւններ : Այսպէս թուարանութիւնը թիւի ծանօթութիւններու գիտութիւնն է . երկրաչափութիւնը տարածութեան ծանօթութիւններու գիտութիւնն է :


Քիչ մը համբերութիւն . աւելի սահմանափակ գիտութիւն , փնտռելով անոր ծագումը . վայրկեանի մը խորհրդածութիւնը բաւական է ատոնց երկուքին ալ գոհացում

տալու : Աչքի առջեւ պէտք է ունենանք մեր նախորդ դասը . Գիտութեան ծննդեան վարկեանն իսկ պիտի տեսնենք : Եթէ զարմացար՝ հետաքրքրուէ , բացատրէ , իրարու հետ կապէ , եւ ահա Գիտութիւնը ծնած է :

Հոս դարձեալ բաժանում մը առաջ պիտի դադարեալ սահմանաւորումը տեղի պիտի ունենայ : Գիտութիւններն արդեօք առաջադրուած հարցումներուն չորսն ալ կ'ընեն , ինչպէս պիտի տեսնենք . ո՛չ : Գիտութիւնը կ'ըսեն թէ բան մը ինչպէս շինուած է կամ կը շինուի , այսինքն կը ցուցնեն անոր ձեւերը կամ օրէնքները . կ'ըսեն նաեւ թէ ինչո՞վ շինուած է բան մը , այսինքն կ'որոշեն անոր տարրերը , այսինքն այդ բանը կամ իրը կազմող զանազան նիւթերը եւ շատ քիչ անգամ եւ գրեթէ մէկ անգամ միայն կը հարցնեն թէ՛ — այն ալ բնախօսութեան մէջ , — ի՞նչ է գործարաններուն նպատակը եւ պաշտօնը : Գիտութիւնը , «ո՞վ շինեց այդ բանը կամ ինչո՞ւ շինուեցաւ» հարցումն ընելու հոգը չեն ստանձնել : Ամէն գիտութեան մէջ իրը կամ իրականութիւնը իբր տուեալ կ'ենթադրուի , բնաւ չեն հարցնել թէ ո՞վ տուաւ այս տուեալը կամ ինչո՞ւ համար տրուեցաւ . գիտութիւնը «նաղողը կեր , այգին մի՛ հարցնե» կ'ըսեն :

Բայց , ինչպէս տեսանք , չորս հարցումներն ալ բնական էին եւ անհրաժեշտ մըտքին : Անխօսութեան պիտի դատապարտե՞նք այդ հարցումները . յայտնի է թէ ոչ . անոնք ալ իրենց համար թումբ մը պիտի շինեն աւելի հաստատուն եւ ամրապինդ . այդ թումբը Խնամասիրութիւնը ըսուած գիտութիւնն է , որ , ինչպէս ըսինք , մեզ հետ իսկ կը ծնի , եւ իւրաքանչիւրիս համար , մեզի հետ կը մեռնի : Ուրեմն ի՞նչ է խնամասիրութիւնը . Խնամասիրութիւնը վախճանական եւ արարչական պատճառներու գիտութիւնն է : Շատ հետաքրքիր է այս գիտութիւնը , ծակը ծուկը կը փնտռէ , ո՞վ շինեց , եւ ինչո՞ւ համար շինուեցաւ . և այնչափ առաջ կ'երթայ որ կը հարցնէ նաեւ . ո՞ւսկից կուգայ աշխարհ եւ ո՞ւր կ'երթայ , թող ան խելքէ մտքէ դուրս հարցումներ պատրաստէ եւ մենք ալ անոնց պատասխանելու պատրաստուինք հետզհետէ :

ԹԱՓԱՌԻԿ



ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՀՈՒՆՁՔԸ

Ամպամած երկինքով տաք ամառներն ամենէն աւելի կը նպաստեն արմտիքներուն արագաբար հասունալուին: Երբ յարդը տա-
կաւ առ տակաւ կ'սկսի դեղին գոյն մ'առ-
նել, հունձքի ժամանակն հասած կը համար-
ուի:

Հնձելու համար, պէտք չէ սպասել որ արմտիքները բոլորովին հասունանան, եթէ չուզուիր որ հատիկներն հասկերէն թափին, ինչ որ մեծ կորուստ մ'է: Եթէ հասունութիւնը բոլորովին ամբողջացած չէ, կրնայ աւարտիլ բարդերուն մէջ: Բարդ կը կոչուին այն առժամայ փոքրիկ պատսպարաններն զորս արտին վրայ կը կազմեն, գետինը չարելով կարգ մը որաներ, մին միւսին մօտ կանգուն և հասկերը օդին մէջ ցցուած զորս կը ծածկեն ուրիշ որաներով, հասկերը դէպի վար դարձած: Այս կերպով երկու հասկ զիրար կը պատսպարեն: Արմտիքներն այս կերպով կրնան պահուիլ մէկ քանի շաբաթ, առանց անպատեհութեան, որով մշակը կըր-
նայ ընտրել ամենէն նպաստաւոր օդը, իր հունձքը ներս առնելու համար:

Բոլոր երկրագործական գործիներուն պէս, արմտիքներն հնձելու ծառայող գոր-
ծիքներն ալ քիչ քիչ կատարելագործուած են: Ատենով ընդհանրապէս մանգաղը կը գործածուէր, և հիմակ ալ գրեթէ ամէն տեղ մանգաղը կը գործածուի երբ ցորեննե-
րը պառկած են: Բայց հնձող մը մանգաղով մէկ օրուան մէջ հազիւ 15—20 ար (մէկ արը հարիւր քառկ. մէդր է) կրնայ հնձել: Գե-
րանդիով, որ երկայն կոթով աւելի մեծ մանգաղ մ'է և սովորաբար տրմուղով մը զինուած կ'ըլլայ, կորովի գործաւոր մը կըր-
նայ օրական 50—60 ար հնձել: Գերանդին, որ գրեթէ ամէն տեղ գործածական է, հո-
ղին երեսէն աւելի դիւրաւ կը քերէ կ'անց-
նի քան մանգաղը, յարդին քանակութիւնը կ'աւելցնէ և մոլախոտերը կը ջնջէ, վասն զի

ցողուններն աւելի ստորոտէն կը կտրէ, այն-
պէս որ յաճախ մոլաբոյսերը չեն կրնար հունտի երթալ, եւ նորէն զիրար արտադ-
րելու անհնարութեան կը մատնուին:

Մեծ մշակութեանց կամ ագարակներու մէջ, նորանհնար հնձող մեքենաներ կը գոր-
ծածուին, որոնք աւելի խնայողական են:

ԲՈՒՍԱՃԱՐԱԿ

Բուսաճարակ բառով կը հասկնանք ամ-
բողջութիւնն այն խոտեղէն բոյսերուն որք արջառներու սննդեան կը ծառայեն: Այս բոյսերը կ'սպառին կա'մ իրենց բուսած տեղ-
ւոյն վրայ, — որ մարգագետին, մարգ, արօ-
սավայր կը կոչուի, — և կա'մ կը հնձուին, կը չորցուին և իբրեւ սնունդ կը տրուին ա-
նուններուն, խաբի կամ յարդի ձեւին տակ: Խոտաճարակները կը հայթայթեն ընդհան-
րապէս մարգագետիններն որք երկու տե-
սակ են. բնական մարգագետինք և արուեսա-
կան մարգագետինք:

ԲՆԱԿԱՆ ՄԱՐԳԱԳԵՏԻՆԵՐ

Բնական մարգագետիններն են այն ա-
րօտավայրները զորս բնութիւնը ինքնարե-
րաբար յառաջ բերած է մասնաւոր հողերու վրայ, եւ կամ անոնք մարդու ձեռամբ հաստատուած են մշտնջենապէս: Բնական մարգերը կը բաղկանան լոկ երկարակեաց խոտերով, բազմաթիւ տեսակներէ բաղկա-
ցած, որոնք մեծ մասամբ փոխ առնուած են սիզատեսակ բոյսերէ (graminée) և պար-
կճաւոր բոյսերէ (լեգումինոսէ, légumineuses) ինչպէս առուոյտ (եօննա), վարսակ (եռլաֆ), ժահին (պոսմ) ևլն, որոնց ներկայացուցիչ-
ները աւելի կամ պակաս բազմաթիւ են մար-
գագետինն մէջ, հողին բնութեան հա-
մեմատ:

Բնական մարգագետին մը կազմելու հա-
մար, ահաւասիկ ամենէն աւելի ընդհանրա-
ցած մէթոտը, նախ պէտք է հողը հարթել, առատօրէն աղբել եւ քանիցս խորապէս հեր-
կել. ապա այս գործողութենէն վերջ հողին բնութեան պահանջած խոտեղէններուն հուն-

տերէն խառնուրդ մը պէտք է ցանել, որուն հետ խառնուած ըլլալու է նաեւ արմաթի մը հունտը: Բայց պէտք է հոգ տանիլ որ արմաթը (սովորաբար վարսակ) չատթեթեւ բաժին մը ունենայ խառնուրդին մէջ: Պէտք է զգուշանալ իբրեւ սերմ գործածելէ խոտի համարանոցներուն տկուքն ու աւուրքը, վասն զի ստէպ անոնց մէջ խառնուած կը գտնուին վտանգաւոր բոյսերու հունտեր ինչպէս աշնանային սապտուկը (colchique d'automne), կծուահամ հրանունկը (renoncule âcre, խառածաղիկ) եւայլն:

Ամէն տեսակէտով, նախամեծար է հունտերու խառնուրդը կազմել ըստ կամա, հոգ տանելով սակայն հողին բնութեան յարմարող սերմերը միայն ընտրել: Սովորաբար զատ զատ կը ցանեն մանրահատ հունտերը եւ խոշորահատները, որպէս զի սփռումը աւելի հաւասարապէս եւ խառնուրդը աւելի կանոնաւորապէս տեղի ունենան: Մարգագետին մը ցանելու ամէնէն նպաստաւոր ժամանակն է գարունը, թէպէտ աշնան եւս երբեմն կարելի է օգտակարապէս յաջողիլ: Սերմանելէ վերջ, ցաքան եւ լողքար կ'անցընեն սերմին վրայէն:

Պէտք է երբեք անխնամ լքանել և ինքն իրեն թողուլ բնական մարգագետին մը, մինչեւ անգամ եթէ անիկա անյիշատակ ժամանակներէ ի վեր գոյութիւն ունենայ և միշտ արդիւնաբեր եղած ըլլայ: Երբ մարգագետինն մէջ չեն ճարակիր անասուններ, որք իրենց աղբը կուտան անոր, լաւ է երկու տարին անգամ մը աղբաւորել զայն, (նախընտրելով փոշիացած աղբերը, որոնք աւելի դիւրաւ կը տարբալուծուին հողին մէջ): Ամէնէն ընտիր եղանակն է ոռոգել մարգագետինը կոյաջուրով (որ կէս առ կէս ջուրով խառնուած ըլլալու է) երբ ձմրան մեծ անձրեւներն անցած են: Պէտք է անջրդի մարգագետինները մերթ ընդ մերթ ոռոգել. կամ չափազանց խոնաւ մարգագետիններուն թացութիւնը բառնալ, փոսեր բանալով եւ կամ ուրդաւորումով (drainage):

Պէտք է ջնջել խլուրդներու հողակոյտները եւ գետնին վրայ տացածել անոնց բա-

րակ հողը: Բայց օգտակար է պաշտպանել խլուրդները, վասն զի անոնք ունեն փնաս չեն հասցներ մարգերուն. ընդհակառակն կարելոր ծառայութիւններ կը մատուցանեն ջնջելով չատ մը փնասակար միջատներ որոնք խոտերուն արմատներով կը սնանին: Ասկէց զատ, խլուրդներուն գետնափոր ճամբաները կը կազմեն նոյնքան փոքրիկ ջրուղիներ որք օգտակարապէս կը նպաստեն հողին խորունկ ոռոգման եւ օդաւորման: Երբ մարգագետիններն արօտ ըլլալու սահմանուած են, պէտք է հոն թողուլ անասուններն այն պահուն երբ հողը թրջած է, վասն զի անոնց ոտքերը խորապէս հողին մէջ մխուելով, իրական փնաս մը պիտի պատճառեն բոյսերուն, որոնց արմատները ապա աւելի դիւրաւ պիտի խլուին արջառներուն ակռային տակ:

ԱՐՈՒՆՍՏԱԿԱՆ ՄԱՐԳԱԳԵՏԻՆԻ

(Շարունակելի)

ԶԻՆՆՆԵՐ ՓՍՔԿՍ

Թախծոտ շմորումն հրայրոտ աչերուդ
Ինձ ոգեւարի կուտայ դողն անհուն.
Տենչերն անուշ, տենչերը փրփրուտ
Հիմա մորթիդ տակ կ'արթննան եռուն...:

Ինձ ոգեւարի կուտայ դողն անհուն
Մութը լուռ, յոգնած կը ճնշէ հոգին...
Հիմա մորթիդ տակ կը խօսին եռուն
Բուրհանի ցաւերն հիւանդոտ, լըթին...:

Մութը լուռ, յոգնած կը ճնշէ հոգին:
Աչերդ լայնցած, աչերդ բոսոր,
Բուրհանի ցաւերն հիւանդոտ, լըթին
Ինձ կ'արտացոլին մութին մէջ հըզօր...:

Աչերդ լայնցած, աչերդ բոսոր,
Անդուսպ մարմաջի աշխարհներ անձայն,
Կ'աղբսեն ինձի մութին մէջ հըզօր,
Զոյգ թեւերու պէս փոթորկին ծոց լայն...:

Անդուսպ մարմաջի աշխարհներ անձայն,
Աստղերը տակաւ կը ծակեն գիշեր.

Հէգ թըռիչին պէս փոթորակին ծոց լայն՝
Պատուել կըղձայ միտքդ ցաւերուտ ամ-
պեր...

Աստղերը տակաւ կը ծակեն գիշերը:
Դուն կը գալարիս, ու չես առներ կանգ...
Պատուել կ'ըղձայ միտքդ ցաւերուդ ամպեր
Բայց խըցիկին մէջ փակուած է մեր դանկ:

Դուն կը գալարիս ու չես առներ կանգ,
կը մեռնին տակաւ իրերը մեր շուրջ:
Բայց խըցիկին մէջ փակուած է մեր գանկ
կը տենչաս հալիլ, հալիլ իբր անուրջ...

կը մեռնին տակաւ իրերը մեր շուրջ
Ու ա'լ կը փռուիս ոտքիս տակ անձիգ
Թողով որ ուղեղդ հալի իբր անուրջ
Գորշ մոռացումին ծոցը երջանիկ...

Լուռ ա'լ փռուած ես ոտքիս տակ անձիգ,
Անխօս տենչերը մարմնուն աչերուդ,
Գորշ մոռացումին ծոցը երջանիկ,
Ո'հ, մէկիկ մէկիկ կը գտնեն յագուրդ:

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

ՅՐՏԱՀԱՐ ՄԱԹՈՆ

(ԿԵԱՆՔԻ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ)

Դեկտեմբերի 23^{րդ} օրն էր: Օգը տարօ-
րինապէս եղի, ու երկինքին ջինջ կապոյտը
իր թարմանուչ ժպիտով յարազուարթ, կեն-
սանորոգ զարուհը կը յիշեցնէր: Թռչուննե-
րը, արբէջիւ, կը թռչտէին զոյգեր կազմած ու
անհուն կայթատօնի մը հանդիսաւորու-
թեամբ շարուած կարգ կարգ, ամէն տեղ
տանելով ձայն, ոգեւորութիւն և կեանք:

Բնութեան այս վեհաշուք հանդիսաւո-
րութեան հակառակ՝ թաղում մը տեղի կ'ու-
նենար գերեզմանատան մէկ անկիւնը: Քանի
մը բարեպաշտ հաւատացեալներու ներկա-
յութեան՝ տէրտէրը մեռելական աղօթքներ
կը մոմնջէր պանդուխտի մը վրայ, զոր կը
պատանքէին հոն՝ երկիւղած կիներ, կարե-
կից ու դրեթէ արցունքոտած աչքերով:

Ո՞վ էր ան, կը հարցնէին ինծի պէս շա-
տեր:

— Պանդուխտ մը, կը պատասխանէին ա-
մենքն ալ՝ ակնյայտ վշտի տրուում չեշտ մը
դնելով իրենց ձայնին մէջ:

Եւ մինչ վարանոտ կը մնար բազմութիւ-
նը՝ առանց ննջեցեալին իսկութեան վրայ
գոհացուցիչ բացատրութիւն մը լսելու, Ա-
շոտի ազգային մը վրայ կը հասնէր, քրտ-
նաթոր, հեւ ի հեւ, գրեթէ շնչասպառ, ու
դժբաղդ մեռելին վրայ կ'իյնար, լալագին
ու հեղձամղձուկ:

Այն ատեն կ'իմանանք տիուր կեանքը
չարաբաստիկ ննջեցեալին, որ Գանկալցի
մըն էր:

* * Մաթօնց Մաթօն, ինչպէս կ'ըսէր Ա-
շոտցին, հայր էր երեք անչափահաս դա-
ւակներու, որոնց պէտքերուն չէր կրնար
հասնիլ, մանաւանդ այս անօրինակ սղու-
թեան ատեն: Եւ մինչ հէ՛ք Մաթօ՝ իր ըն-
տանիքին հոգերով մտատանջ՝ կը խորհէր օ-
րական չորհացի խնդրոյն վրայ, առանց ելքի
ճամբայ մը գտնելու, կը հանդիպի մեծա-
հարուստ Օսմանցիի մը՝ որ քանի մը հա-
րիւր դուար գներ էր չըջակայ գիւղերէն և
զանոնք մինչեւ Տարինտէ անվնաս տանելու
կարող հովուի մը պէտք ունէր:

Օգը շատ պայծառ էր ու երկինք ժըպ-
տուն:

Մաթօ, թիկնեղ, կաշմբուռն ու այս-
օրինակ ճամբորդութենէ մը անբաժան եղող
քնատութեան, խոնջէնքին ու բուք-փշօն-
ներուն դիմադրելու վարժ ի բնէ, կը փու-
թայ օգուտ քաղել առիթէն ու վեց քաշ ա-
ղի կը սակարկէ գլուխ հանել այս գործը:

Վեց քաշ ա՛ղ: Ի՞նչ մեծ բարեբաղդու-
թիւն Մաթօին համար, որուն քսակը ամ-
բողջ ձմրան եղանակին մէջ՝ ոչ իսկ տասնո-
ցի մը ներկայութիւնը պիտի ողջունէր ա-
պահովապէս:

Վեց քաշ ա՛ղ: Զէ՛, Նախախնամութեան
միջամտութիւնն ըլլալու էր այս գործին մէջ:
Իր լաճերը օրերէ ի վեր կորեկ հացին լոյս
երեսը տեսնելու չէին բաղդաւորուած: Ա՛հ,
վեց քաշ աղ, ինն դահեկան ըսել էր, որ կը
բերէր չափ մը ցորեն, այսինքն 12 քաշ ցո-
րեն կամ 18 քաշ հաց:

Մաթօ այս խորհրդածութիւններէն ետք
երախտագիտութեամբ ընդունէր էր Օսման-

ցիւն առաջարկը և անմիջապէս դուրսն անցեր էր իր հօտին, զոր չորս օրուան սպառիչ յոգնութիւններէ ետք յաջողեր էր բերել մինչեւ Հաճըլարի բարձրաբերձ բլուրներուն վրայ, ուր պաղ հովեր շարունակ կը փչեն: Մաթօ՝ խնդամուխի ու զուարթ՝ կ'երգէր անդու անդադրում, գիւղական ամենէն քաղցր եղանակները թրթռացնելով բերնին մէջ: Իր խօլ ու բիրտ բայց նաեւ առնական ու առոյգ բացագանչութիւններով ինչպէս ողբերգած էր մինչեւ այն տեղ ապուշ ոչխարներն ու սատանորդի այծերն որոնք կախարդուած կարծես իր խայտացող ու մելանուշ, պարզուկ եղանակներուն ելեւէջներէն, կտրեր անցեր էին այն դերբուկ ու ոլորտապտոյտ սարերն ու ձորերը, առանց նեղութիւն մը տալու Մաթօին, եւ միշտ ունկնդիր անոր «հօ», հօ', հօ' ձնեւուն՝ իրենց ցատքոտն ու զուարթ վաղքին մէջ իսկ:

Մաթօ ուրախութենէն կը ճառագայթէր: Հոգն էր աշխարհի պերճանքներն ու պըշրանքները: Ոտքն անցուցած էր աւանդական տրեխը՝ դիմացկուն ու հաւստարիմ, զոր զանձերու հետ չէր փոխեր. կունակն ունէր հաստկէկ թանձր կտաւէ շապիկն ու թեզանաւոր բաճկոնակը և ստոնց ամէնուն վրայ հովանաւոր թաղիքէ գլխանոցը՝ պարզուկ բայց շատ կակուղ ու տաքուկ: Ա'լ ինչ կ'ուզէր: Աշխարհի կրնար դիմադրել անոնցմով և արհամարհել անձրեւ, ձիւն ու փչօնն իսկ:

Մինչեւ հոն յայտնապէս ժպտեր էր բաղդը իրեն: Երկու ժամու կարճ միջոց մը կը մնար մինչեւ Տարենտէ՝ ուր ամէն տաժանքներէ ետք՝ պիտի վայելէր լիութի հանգիստ, սրտի անճառ հեշտութեամբ խորհելով այն 18 քաշ հացին վրայ, զոր իր լաճերը տաքուկ տաքուկ կ'ըմբռնէին հիմա՝ իրենց մօրը շուրջն հաւաքուած, ճլուրլուն ու գերերջանիկ:

Հէ՛ք Մաթօ, հովուական գաւազանը ձեռքը ու սիրուն խաղի պատառիկ մը բերնին մէջ ելր բայսպէս կը քշեր իր հօտը՝ հեշտօրօր երազներու ծոյր խորատոյգ, ոչ իսկ կրնար մտքէն անցունել թէ պզտիկ հով մը կարող էր ամէն բան վեր վար շրջել յանկարծ: Եւ

արդէն շատ ալ չանցնիր ասոր վրայ: Յանկարծ բարակ հով մըն է որ կ'սկսի սուլել՝ այն սառուցապատ բարձունքներուն վրայէն ու ամպերու քմածին ծուէններ կը թափառկոտին դէս ու դէն, հորիզոնին վրայ:

Մաթօ միշտ անհոգ ու յանդուգն՝ առաջ կը մղէ իր հօտը, ժամ առաջ Տարենտէ հասնելու համար: Հովը սակայն կը սաստկանայ եւ երկինքը կուռ կուռ ամպերով կը ծածկուի ու վայրա՛գ, ոռնացող, խապոտ երաժշտութիւն մը կարծես կը տիրապետէ միահեծան, ամբողջ բլուրն ի վար բլուրն ի վեր:

Եւ ահա ձիւն մըն ալ փչօնով համեմուած, Բայցձիւն մը որ շղթայաղերծ հովերուն խառնուած՝ անխոնջ ու միօրինակ՝ կը ծծէ Մաթօի գլուխը ու կը ծծէ անյագ անոր երակներուն տաքութեան վերջին մնացորդը:

Ո՛չ մէկ նշոյլ արեւի, լոյսի, կեանքի: Թռչուններն, ահաբեկ, ծակէ ծակ փախած են: Ոչ իսկ ագռակի կռինչ մը: Ամէն ինչ խոյս տուած է, ամէն բան անհետ:

Մահուան չարաշուք կոչն է որ կը լսուի հիմակ՝ փչօնին ամէն մէկ սուլումին աւելի՛ ահարկու, աւելի՛ տիրական և աւելի՛ սարսուզը եցիկ:

Մաթօ կը ցնցուի, տակաւ կ'զգայ, կ'ըմբռնէ վտանգը ու կը փութայ իր թաղեայ գլխանոցին ապաստանի: Բայց ընդունա՛յն: Անպատկառ ու աներես բուքն ամէն ծակուծուկ կը հասնի՝ կայծակէն արագ ու մահէն աւելի անագորոյն: Ինչ ընէր հէ՛ք Մաթօ:

Թողո՞ւր իր ոչխարներն ու փութա՛ր գիւղն իյնալ, որ շատ մօտիկ էր արդէն: Չէ՛, Մաթօ ատանկ վատութիւն մը չէր կըրնար ընել: Պէտք էր կա՛մ մեռնիլ հոն՝ իր հօտին քով կամ դանոնք ալ ազատել իրեն հետ: Ուրիշ կերպ խորհիլ անհնար էր:

Այս միջոցին սակայն ձիւնը, ցուրտը, փչօնը այնքան սաստկացան որ դուարները ցրուցան եղան դէս ու դէն: Ժայռեր, ծերպեր, քարանձաւներ ու խոռոչներ ծածկուեցան ձիւնով: Բոլոր հօտը փճացած էր հոն, անճրկած ու բաղդէն քշուած կուրօւրէն:

Մաթօ, ա՛լ ճարահատ, խորհեցաւ վեր-

ջապէս գիւղը վազել և օգնութիւն փութացնել դուարներուն :

Ուզեց վաղել , ձայն տալ , փորձեց իսկ , քանի մը քայլ առնել , քանի մը անգամ պոռաց իսկ : Ափսո՛ս , իր ձայնը կորսուեցաւ հովերուն կատաղի մռնչիւններուն մէջ . իր քայլերը դողդղացին ու կեցած տեղը քարացած մնաց :

Սո՛ւլ , զայրագին , գերմարդկային ճիգեր ըրաւ իր մթագնած իմացականութիւնն արթնցնելու , իր ընդարմացած ուժերն հաւաքելու : Ի գո՛ւր :

Ընկճուա՛ծ էր , փշրուա՛ծ , քայքայուա՛ծ՝ կատաղի տարրերուն հուժկու յարձակումին ներքեւ եւ վերջապէս գետինն ինկաւ , մեծաշառաչ գետին փռուեցաւ անկենդան , գգայագի՛րկ , մեռա՛ծ , դիակնացա՛ծ առ յաւէտ :

Սառա՛ծ էր Մաթօ :

Բ

Դադաղին մէջ էր հիմակ ան՝ կծկուած իր շապիկին ու բաճկոնակին մէջ՝ որոնք սառա՛ծ , փայտ կտրած էին իրեն պէս իրենց բզբտումներուն մէջ իսկ , ու կը յամառէին բաժնուիլ դեռ իրենց չարաբաստիկ տէրօջը մարմինէն՝ գերեզմանին դուռն իսկ :

Տեսայ զայն մինչ կը պատանքէին , տեսա՛յ հէ՛ք Մաթօն բարտի մը պէս բարձր կէկ հասակով : Թաւ ընչացքին գեղեցիկ պերեւեշտները կողմնակի անփութօրէն ձգուած տմոյն երեսներուն վրայ : Գլխուն յորդ գիսակները խառն ի խուռն փռուած ետեւն ի վար , ամբողջ ուսին երկայնքը , ծածանուտ ու ծփուն հասկերու պէս տեղ տեղ համակ սառած , ճեփճերմակ ու տեղ տեղ խաթարուած , փուշերու հանգունակ տարտղնած , անխիլիւրտ ու անյարի՛ր , ինչպէս իր մարմինը :

Թշուա՛ռ երիտասարդ , իր երեսուն գարունները խամրած կ'երեւէին իր ճակտին վերեւ : Բերնին մէջ փոխանակ սիրոյ գողտրիկ խաղերուն՝ հիմակ սեղմած էր ափ մը բուրդ՝ միակ յիշատակ իր գլխանոցին , զոր խուժդուժ հովերն առեր տարեր էին ըլուրն ի վեր :

Ու իր ձեռքերը ու իր բազուկները՝ հուժկու , պինդ , երկաթի պէս ամուր՝ փա՛կ էին , պրկուած , կարկամած ջլածքօրէն :

Ու հոգն իջեցուցին տարաբաղդ Մաթօն , կարեկի՛ց , տաք տաք արցունքներով՝ քանի մը բարեպաշտ ազգակիցներ , ու գոցուեցաւ հողակոյտը :

Եւ դո՛ւք , հովե՛ր սառնաչունչ , հովե՛ր մահաչունչ , տարէ՛ք , տարէ՛ք կ'ըսեմ Մաթօի վերջին կարօտները իր սիրաջերմիկ Թագուկին ու պզտի , անմեղունակ ձագերուն : Սեւ հոգն իջաւ ան , ա՛լ ի գո՛ւր չսպասեն անոր վերադարձին :

Տարեցե

Մ. Ա. ԹՈՒՐԵԱՆ

ՔԻՉ ՍԸ ԾԻԾԱԼ

— Կ'արձեմ դուրս կ'ելնէիք կոր...

— Այո՛... Ժամադրութիւն մը... բնաւ ժամանակ չունիմ...

— Սա իմ պզտիկ պարտքիս համար կուգայի կոր որպէս զի...

— Օ՛հ , շատ լաւ... հրամայեցէք , նստեցէք...

— Որպէս զի ձեզմէ պայմանաժամ մը խնդրէի...

— Ուրեմն ներեցէ՛ք , ինծի կ'սպասեն կոր :

— ... Եկայ որ , կ'ըսեմ ձեզի , պայմանաժամ մը խնդրէի երբ դէմս ելաւ տալիք...

— Հրամայեցէ՛ք ուրեմն , նստեցէք , խնդրեմ... Այդ սիրելի անձը ինչո՞ւ միասին չը բերիք...

Ու կը պոռայ սպասաւորին .

— Լիմոնատ մը , բան մը բեր , Մառկօ՛ւ...

* * *

— Ձեր պարտէզին դուռը շատ դժուար կը հրուի կոր... պէտք է քիչ մը նայել տալ :

— Օ՛հ , ես դուռին հետ հաղորդակցութեան մէջ դրած եմ ջրաբաշխական մեքենայ մը , անանկ որ ամէն անգամ երբ մարդ մը դուռնէն ներս կը մտնէ՝ երկու դոյլ ջուր վեր կը հանէ :

Ս.

Արսումսեք . — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆՅԱՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳՐԻՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Դրու

800 փոքրագիւ երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ունեւորու եւ ընթացեալ ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 գեղջ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի սնորհնութեան:

ՆԻՈՒ ՀՈՄ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Ուշադրութիւն գործարարին մարտիին



Որ կը մըցի բոլոր կարի մե-
քնաններուն հետ

Իր պարզութեամբ

Տոկունութեամբ

Արագութեամբ

Թեթեւութեամբ

Աժանութեամբ

Թուրքիոյ միակ ներկայացուցիչ
ՅՈՎՀ. Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնացեղի. — Սիրքէճի, Բէօրըիւլի
խան, Թիւ 3:

Մասնանիւղ. — Ղալաթիա, Պէօյիւլք Միւ-
լէթ խան, Թիւ 33:

Գնողներու համար վճարման ամէն տե-
սակ դիւրութիւններ:

ԱՌԵԻՂԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՒՆ ԹԷՅԻ



Կ. ԵՆՎՐՈՒԵԱՆ

Վ. Ի ՍԱԳՈՒԼԵԱՆ

ՄԵՏԱՔԱՆԱԿ ՃՈՒ ՄԹԵՐԲ

գերընտիր եւ ամէն ճաշակի յարմար

Որոշ եւ չափաւոր գին

Պահել գաբու, ձէլալ պէյ խանի տակ

Թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառի մեր պատ-
ուարժան ընթերցողներուն կը յանձնարա-
րենք սոյն վստահելի վաճառատունն, որ
երկար տարիներէ ի վեր պատուաւոր դիրք
մը գրաւած է, եւ ամէն տարի չի զլանար իր
թէյի նուէրը՝ ի նպաստ կարօտելոց:

Վստահաբար դիմեցէ՛ք եւ պիտի չզբղ-
ջաք: — Վաճառատան մարդային ուշ դրէ՛ք:

ԿԱՌԵԻՈՐ ԱԶԴ. — Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատ-
կացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան
իրենց ծանուցումները ԶՐԻ հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուան
համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ եւ տարեկան:

ԻՍԹԸՐՆ ԳԱՌԻՆԹԻՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընդդեմ հրդեհի ի «ՀԸԼԼ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 7,250,000

ԱԼԼԷԱՆՁՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց եւ արկածից ի «ՃԵՆՈՎԱ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 87,455,645

Ընկերութեանց Դրամասունն է «Բրէտի Լիօնէ»

ՌԷՆԱՆ-ՎԷՍԹՖԱԼԻԷՆ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի Կլատալա

Դրամագլուխ եւ Պահեստ Ֆր. 6,250,000

ԳՐԱՍԵՆՆԱԿ.— Ստամպուլ, Հաճօրուլօ Խան, Թիւ 53, 54, 55, 56

Լիազօր Ներկայացուցիչ

Գ. ՃԵՐԱՏԵԱՆ



ՌՕՍԻԱ. — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՅՔ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին

34,775,642 ֆրանք

երաջիաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնատեղի, Բարափին վրայ, Մախասան հին տեղը

Ընդհ. քննիչ
Ա. ՀԻՒՐՄԻՒՋ

Ընդհ. Դործակալ
ԹԷՌՏՈՐ ՌԷՐԲԷՆ

ՄԵՐ ՀԱՍՏԷՆ

Հանրագիտակի վերաբերեալ ամեն գումարին պէտք է ուղղել Նեան Պերպերեան
սպարանը, Էսփ զապրիյէ հասկէսի քիւ 61, առ Տնօրէնութիւն
եւ Խմբագրութիւն «Հանրագիտակի»